նկատելով իր նպատակին, Գերպ. Աբրահոր հրամանով կը գնէ հող կայարանին մօտիկ, և իր անխոնջ աշխատութեամբը և անմիջական հսկողութեամբը կանգնել կու տայ Միաբանութեանս ծախքով եկեղեցի և առաջնորդարան դպրոցով միասին։ Եւ մինչ նոր աւարտած՝ կը սկսէր տեսնել այլեւս եկեղեցւոյ օծման պատրաստութիւնները, յորում իր յոգնութեանց պտուղը պիտի քաղէր ուրախութիւն և մխիթարութիւն, ահա վերահաս համազգային սարսափելի աղէտը, տարագրութիւնը... ու անձնանուէր Հովիւը համակերպելով Նախախնամութեան անքնին կամքին կը սկսի իր սիրելի հօտին հետ անկոխ ճամբայ մը կարել դէպ ի նոր Գողգոթայ։ Հ. Աւետիք Վ. ըլլալով «այր հաւատոց»՝ այդ տառապանքի կեանքը նկատեց իրեն առաքելական կարևորագոյն ասպարէզ մը. աստուածավառ եռանդով ու չարքաշ՝ նեստուեցաւ ամէն կողմ, թէ՛ իր տարաբախտ հօտին և թէ բախտակից բազմաթիւ հայորդիներու բարոյական և այլ ամէն կերպ աջակցութիւն մատուցանելու՝ ճշմարիտ հովուի մը գիտակցութեամբ. երբեք չնայելով որ իր այդ անձնանուիրութիւնը և համարձակ վերաբերումը օրուան թուրք վարիչներու հետ, ահաւոր նեղութեանց ու չարատանջ մահուան կրնային յանգիլ։

Տարի մը Գոնիայի կողմերը խոստովանողի կեանք անցընելէ վերջ՝ աստուածային յատուկ ողորմութեամբ, Վեր. Հ. Մեսրոպ Վ. Յահակեանի մահէն ետք կը վերադառնայ ի Պոլիս և կը ստանձնէ Միաբանութենէս յանձնուած Մեծաւորութեան պաշտօնը (1917–1920)։ Բայց քիչ յետոյ դարձեալ ընտրուելով անդամ Ուխտիս վարչական ժողովին՝ կը թողու Պոլիսն ալ ու կուգայ Ս. Ղազար, ուր կը մնայ մինչև վերջ։ Այս շրջանիս կ'ունենայ ի վանս նորագոյն կարևոր ծառայութիւններ։ Առաջիկայութեան հետ կը վարէ բաւական ժամանակ վանքին Գործակալութիւնը։ Այլ և յոյժ թանկագին եղան մատուցած բարոյական ծառայութիւնները։ Յատկապէս ճանչցուած և ընդհանրութենէն յարգուած ըլլալով իբրև խղճամիտ, ներանձնասէր և կրօնաւորական ողջ սկզբունքներու տէր, ամենքը կը նկատէին զինքը իբրև հայր։ Իր վայելած այս հանգամանքովը եղաւ ընտիր խորհրդատու իրեն դիմողներուն և տարիներով վարեց Թոստովանահայրութեան և Հոգ. Հայրութեան պաշտօնը՝ վանքի քահանայից և աշակերտաց, ինչպէս նաև Մ. Ռափայելեան սաներու համար։

Հ. Աւետիք Վ.ի այս բարեմասնութիւնները գնահատուած են նաև արտաքին անձերէ։ Եւ յիրաւի իր ուղիղ, ողջամիտ և բարեացակամ վարմունքին ու գործերուն համար արժանացած էր ժամանակակից Հայ. Կաթ. Գերերջ. Պատրիարքներու, Գերպ. Թեմականներու, ընդհանուր կղերին և ժողովուրդին մասնաւոր համարման և յարգանքին։ Նոյն իսկ Հայութեան միւս հատուածները, ըլլայ կղեր կամ ժողովուրդ՝ որոնց հետ շփում ունեցած էր, մեծապէս կ'ակնածէին իրմէ՝ ծանրախոհ վարմունքին և աստիճանին վայել ձիրքերուն համար։

1929–ի Ընդհ. Ժողովը, յորում կ'ունենայինք Միաբանութեանս նորընտիր Ընդհանրական Աբրահայր Գերպ. Տ. Տ. Յովհան Վ. Աւգեր, կ'ընտրուէր նաև Վ. Հ. Աւետիք Վ. Գազէզեան Ընդհ. Աթոռակալ և Առաջիկայ։ Սակայն չկրցաւ Ուխտս այս անգամ վայելել անոր թանկագին աջակցութիւնը և օգտուիլ այնքան միաբանասէր խորհուրդներէն՝ վերահաս անողոք հիւանդութեանը պատճառաւ, որ և հուսկ խլեց զինք մեզմէ դժբախտաբար վաղճան դնելով անոր աստուածանուէր քայլերուն ու վշտահար թողլով զՄիաբանութիւնս։

Հանգուցեալը որքան որ կեանքէն կարևորագոյն մաս մը նուիրեց առաքելական գործունէութեան և վարչական գործերու, սակայն գիտցաւ միանգամայն օգտագործել պարագաները ուսումնական աշխատութեամբ ալ ըստ կարելւոյն պարապելու։ Իր նախասիրած նիւթերն էին Հայ Եկեղ. Պատմութիւն և Հայ Հնախօսութիւն։ Գրած